# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**ՈՐՈՇՈՒՄ** 238
**22 հունիսի 2022 թվականի N -Ա**

## ՆՅՈՒԹԱԿԱՆ (ԴՐԱՄԱԿԱՆ) ՕԳՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՆՔՈՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ԴԻՄԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N 84-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

**որոշում եմ.**

1. Նյութական (դրամական) օգնության խնդրանքով Սյունիքի մարզպետարան դիմած քաղաքացիների սոցիալական վիճակի ուսումնասիրության նպատակով ստեղծել հանձնաժողով և հաստատել հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ քաղաքացիների դիմումների ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա պարբերաբար կազմակերպել քննարկումներ և ներկայացնել համապատասխան առաջարկություններ:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2020 թվականի փետրվարի 28-ի «Նյութական (դրամական) օգնության խնդրանքով Սյունիքի մարզպետարան դիմած քաղաքացիների սոցիալական վիճակի ուսումնասիրության նպատակով հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 11 փետրվարի 2005 թվականի N 9 կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 84-Ա որոշումը:

23.06.2022

X

ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2022թ. հունիսի 22
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի 2022 թվականի
հունիսի 22-ի N [illegible] որոշման

**Կազմ**

**Նյութական (դրամական) օգնության խնդրանքով Սյունիքի մարզպետարան դիմած քաղաքացիների սոցիալական վիճակի ուսումնասիրության հանձնաժողովի**

| | | |
|---|---|---|
| Նարե Ղազարյան | - | Սյունիքի մարզպետի տեղակալ (հանձնաժողովի նախագահ) |
| Անահիտ Վանյան | - | Սյունիքի մարզպետի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար) |
| Կարեն Բալյան | - | Սյունիքի մարզպետի խորհրդական |
| Նարեկ Դավթյան | - | Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության պետ |
| Սեյրան Ավետիսյան | - | Սյունիքի մարզպետի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ |
| Նունե Գևորգյան | - | Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ |
| Արամ Շահնազարյան | - | Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ |
| Աննա Ոսկանյան | - | Սյունիքի մարզպետի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ |

6/22/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

**ՀՀ Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար** **Է. Մարտիրոսյան**